

ԱՐՄԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ

ԻՍԼԱՄԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՄԻՆԻՅԱՅԻՆՈՒՄ¹

Արաբական խալիֆայության Արմինիյա նահանգը վերջնականորեն ձևավորվում է Ը. դարի սկզբներին՝ մահմեդականների կողմից ասպատակված Հայոց, Աղուանից և Վրաց քրիստոնյա իշխանությունների տարածքներից: Նահանգը բաժանված էր, ինչպես մեզ է հաջողվել ճշտել, Արմինիյա Ա (արաբ. *أرمينية*) վարչական միավորի՝ Դվին-Դաբիլ կենտրոնով, Արմինիյա Բ-ի (արաբ. *أروان* [Առան]) Պարտավ-Քարձա՝ա կենտրոնով և Արմինիյա Գ-ի (արաբ. *جرزان* [Ջուրզան]) Տփղիս-Թիֆլիս կենտրոնով²:

Արաբները, սակայն, իրենց արշավանքները դեպի այս իշխանությունները սկսեցին դեռ է. դարի կեսերից: Մահմեդական հեղինակավոր պատմագիր ալ-Քալաձուրիի (մահ. 892-ին) «Երկրների նվաճումների գրքի» (*كتاب فتوح البلدان*) [Քիթաբ ֆուխուս ալ-ֆուղան] «Արմինիյայի նվաճումը» գլխում պահպանվել են հաշտության համաձայնագրերի բնագրերը, որոնք Հաբիբ իբն Մասլամա անունով գորավարը 654-655 թթ. կնքում էր հայոց և վրաց մայրաքաղաքների ավագանու հետ: Դրանցում տեղ գտած պայմանները վկայում են առ այն, որ սկզբնական շրջանում իսլամը դավանող զավթիչները ցուցաբերում էին հանդուրժողություն ինչպես քրիստոնյա, այնպես էլ այստեղ ձևավորված մյուս կրոնական համայնքների հանդեպ: Դաբիլի (Դվինի) բնակչության հետ ստորագրված փաստաթղթում մասնավորապես ասված է. «Սա է Հաբիբ իբն Մասլամայի երաշխավորագիրը Դաբիլի քրիստոնյա բնակիչներին, զրադաշտականներին ու հրեաներին... առ այն, որ ես երաշխավորում եմ ձեր անձերը..., եկեղեցիները, (կրակի. – Ա. Շ.) տաճարներն (ու սինագոգները. – Ա. Շ.)»: Իսկ Թիֆլիսի (Տփղիսի) քրիստոնյա բնակչության և զրադաշտական համայնքի հետ³ կնքված համաձայնագրում նա «...երաշխավորում է նրանց ան-

¹ Հեղինակը շնորհակալություն է հայտնում Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանին ուսումնասիրության համար հատկացված 5.38. 283.2014 դրամաշնորհի համար:

² Տե՛ս **Арсен Шагинян**, «Система административного деления и управления Арабского халифата в Армении и Арминийи», *Вестник Московского университета*, сер. 13, Востоковедение, 2008, № 3, с. 68–85; **Արսեն Շահինյան**, «Արմինիյա Արաբական Նահանգի Սահմաններն ու Վարչատարածային Բաժանումը ըստ Արաբագիր Սկզբնաղբիւրների». - *Հայկագեան Հայագիտական Հանդէս*, հատ. Լ., Պէրոյք, 2010, էջ 319-328:

³ «Վրաց դարձ» (ՅՐԵՅԵՅԻՆ ԵՐԵՄԵՅԵՅԻՆ [Մոսկովայ Քարթլիսայ]) երկի անանուն հեղինակը (է. կամ Թ. դար) պնդում էր, թե կայսր Հերակլ Ա-ն (610–641) 627 թ-ին դեպի Քարթլի պատժիչ արշավանք կատարելիս, «մունետիկներ ուղարկեց Թբիլիսի... (հրամայելով. –

ձերը, (կրակի. – Ա. Շ.) տաճարները, վանքերը, ծխակատարություններն ու կրոնը»¹:

Ճիշտ է, առաջին փաստաթղթի տեքստում կա հետևյալ վերապահումը. «... մենք պարտավոր ենք հավատարիմ մնալ այս ուխտին, ինչքան ժամանակ, որ դուք էլ հավատարիմ կլինե՞ք վնասելով ջիզյան ու խարաջը», այսինքն՝ գլխահարկն ու հողահարկը: Նմանատիպ վերապահում կա նաև հաճորդ համաձայնագրի տեքստում. «... Հաբիբ իբն Մալամայի... պալմանն է, որ դուք գիտակցե՞ք ձեր նվաստ վիճակը և թե ում վնասել ջիզյան»²: «Ապա թե ոչ, – կարդում ենք հրովարտակում, որը 655 թ-ի դարնանը նույն գորավարը հասցեագրել էր Ջուրգանի, այսինքն՝ Վրաց իշխանության, բնակչությանը, – պատերազմ կհայտարարվի ձեզ հանուն Ալլահի ու նրա մարգարեի: Քող խաղաղություն լինի նրանց, ովքեր որ ճշմարտության ուղիով են ընթանում»³:

Մահմեդական արարները այդ վաղ ժամանաշրջանում ընդհանրապես չէին էլ փորձում բռնի կերպով իրենց միաստվածյան կրոնը տարածել Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի քրիստոնյա բնակչության կամ զրադաշտական համայնքի շրջանում: Այդ թեզի օգտին են ականատես կերպով խոսում նշված փաստաթղթերի որոշ կետերը. «Եթե դուք դարձի գա՞ր և (մանմեղականի. – Ա. Շ.) աղոթք կատարե՞ք ուրեմն հավատով մեր եղբայրներն ե՞ք, ապա թե ոչ (միայն. – Ա. Շ.) ջիզյան կծանրանա ձեզ վրա»⁴:

Միևնույն ժամանակ արաբական կողմը պնդում էր, որպեսզի համաձայնագրերում անպայման նշվի իսլամի գերիշխող դիրքի մասին: Ահա թե ինչ է ասվում Ջուրգանի (Վիրքի) ողջ բնակչությանը հասցեագրված Հաբիբի հրովարտակում. «Ձեր սուրհանդակը... ինձ և իմ ընկերակից հավատացյալներին ներկայացավ և հայտնեց ձեր անունից, թե մենք մի ժողովուրդ ենք, որին Ալլանը պատվել ու գերադասել է: Իրավ այդպես է արել Ալլանը, մե՞ծ փառք նրան և նրա օրհնությունը թող լինի իր մարգարե ու լավագույն արարած

Ա. Շ.), որպեսզի բոլոր քրիստոնյաները հավաքվեն ֆաղաֆային եկեղեցիներում, իսկ մոզերն ու կրակապաշտները կամ ընդունեն մկրտություն, կամ էլ ոչնչացվեն» (յարտոլոս Ենոզրեճ, Գամմուց Ն. յալեհիմձվոլո, 1-2, ԹՃԻԼՈՍԻ, Տաբլեմճիօջո ԳամոմԵՅՄԼՈՅԻ, 1955-1959 – Կարլիս Ըխօրեճ, ԻՅԸ. Շ. Կալչուսիսի, 1-2, ԹԵԻԼԻՍԻ, ԳոսիՅԸԸ, 1955-1959, Դ. 1, Ե. 72-138):

¹ كتاب فتوح البلدان تأليف الإمام أبي العباس أحمد بن يحيى البلاذري – *Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori*, M. de Goeje (ed.), Lugduni Batavorum, 1866, p. 200, 201: Հարկ է նշել, որ նույն պայմաններով արաբ նվաճողները Բյուզանդիայի դեմ ռազմարշավի ժամանակ հաշտության դաշինք էին կնքում և՛ Ասորիի, և՛ Պաղեստինի բոլոր խոշոր ֆաղանների բնակիչների հետ: Այ-Ֆալաճուրիի մոտ կարելի գտնել այդ փաստաթղթերից մի ֆանիսի բնագրերը (Ibid, p. 121):

² Ibid., p. 200, 201:

³ Ibid., p. 201:

⁴ Ibid., p. 202:

Մումամմադի վրա, խաղաղություն նրան»¹: Թիֆլիսի (Տփղիսի) բնակչության հետ կնքված դաշնագրում ընդգծվում է ցանկացած մահմեդականի արտոնյալ կարգավիճակը. «Դուք մեզ տալու եք ձեր խորհուրդները և օժանդակությունը (պայքարելու. – Ա. Շ.) Ալլահի ու նրա մարգարեի թշնամիների՝ (հեթանոսների. – Ա. Շ.) դեմ, ինչքան որ կարող եք: Պարտավոր եք մեկ գիշեր հյուրընկալել կարիք ունեցող մահմեդականին՝ նրան տալով Գրբի ժողովրդի², միայն թե (ս. Գուրանի. – Ա. Շ.) կողմից օրինավոր համարած կերակրից: Եթե որևէ մահմեդական համապարհին մոլորվելով, հանկարծ ձեզ մոտ իջևանի, պարտավոր եք նրան հասցնել ամենամոտ տեղում գտնվող հավատացյալների՝ (մահմեդականների. – Ա. Շ.) մոտ, բացի այն պարագայի, երբ դա անկարելի է»³:

Իրավիճակը անփոփոխ է մնում նույնիսկ երբ Ը. դարի սկզբներին Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի երեք քրիստոնեա պետական միավորումները վերջնականորեն նվաճվում են մահմեդականների կողմից՝ միավորվելով Խալիֆայության Արմինիյա նահանգի վարչական սահմանների մեջ: Ալ-Բալաձուրիի մոտ պահպանվել է ևս մեկ երաշխավորագրի բնագիր: Այս անգամ այն տրամադրում է Թիֆլիսի (Տփղիսի) բնակչությանը Ումայյանների խալիֆայության (661-750) փոխարքա ալ-Ջառահ իբն Աբդ Ալլահ ալ-Հաբամին (722-725 և 729-730): Վերջինս, վկայակոչելով Հաբիբ իբն Մասլամայի հաշտության գիրը, հստակ ասում է. «Ես հաստատեցի նրանց՝ (Թիֆլիսացիների – Ա. Շ.) երաշխավորագիրը և հաշտության պայմանագիրը ու հրամայեցի, որ հարկերը չավելացվեն»⁴:

Միևնույն ժամանակ հայ և վրաց մատենագրքերում այլևս անկարելի է գտնել տեղեկություն Ը. դարում նորակառույց եկեղեցիների վերաբերյալ, և դա այն դեպքում, երբ նախորդ է. դարը այս երկրների պատմության մեջ նշանավորվեց պաշտամունքային շինությունների շինարարական եռուզեռով: Սրա բացատրությունը մենք գտնում ենք հեղինակավոր իրավագետ, Աբբասյաններ

¹ *Ibid.*, p. 201:

² Առաք նվանողները «Գրբի ժողովուրդ» (أهل الكتاب [ահլ ալ-Քիթաբ]) բառակապակցության տակ նկատի ունենին միայն սուրբ Աստվածաշնչի (Հին և Նոր կտակարանների) ժողովուրդներին:

³ *Ibid.*, p. 201: Մահմեդական զավթիչները հանդուրժողություն էին դրսևորում ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ: Ալ-Բալաձուրիին «Աձարբայչանի նվաճումը» գրույթը բացում է գրանշումով առ այն, որ Հուգայթա իբն ալ-Յամանը հիջրայի 22 (642/3)-ին հաշտության դաշինք կնքեց Ատրպատականի բնակչության հետ «...այն պայմանով, որ ոչ ոք չսպանվի, կամ չգերեզմարվի, ոչ մի կրակի տանառ չհանդի, չնեղեն Բալասաչանի, ... Բրդերին, հատկապես Շիզի ժողովրդին չարգելեն պարել իրենց (կրոնական. – Ա. Շ.) տոնակատարությունների ժամանակ ու կատարել այն (պաշտամունքային ծեսերը. – Ա. Շ.), որոնք մինչ այդ կատարվում էին» (*Ibid.*, p. 325):

⁴ *Ibid.*, p. 202:

րի խալիֆայության (750-1258) գերագույն դատավոր Աբու Յուսուֆի (731-798) «Հարկերի մատյանում» (كتاب الخراج [Քիթաբ ալ-խարաջ]): Այնտեղ սս-ված է հետևյալը. «Նրանք՝ (այլադավանները. – Ա. Շ.) իրավունք չունեն նոր տաճարներ կամ եկեղեցիներ կառուցել»¹:

Եվ միայն թ. դարի սկզբներին, երբ Արմինիայի տարածքում սկսեցին ձևավորվել Բագրատունեաց ինքնավար իշխանությունները, մեր տրամադրության տակ ունենք արաբական տիրապետության պայմաններում կառուցվող առաջին հայ և վրաց եկեղեցիների մասին վկայություններ²: Թերևս միակ բացառությունն է այս ենթատեքստում ժԱ. դարի վրաց պատմիչ Ջուանշեր Ջուանշերիանիի հիշատակությունը առ այն, որ Քարթլիի մտավար (Վրաց իշխան) Արչիլը (մահ. 786-ին) Սաձմորիում, որը Կախեթիի շրջանում էր, եկեղեցի կառուցեց³:

Նոր եկեղեցաշինության դեմ իշխանությունների կողմից սահմանված արգելքը պետք է որ նպաստեր Արաբական խալիֆայության պետական կրոնի տարածմանը Արմինիյա նահանգի քրիստոնյա ժողովուրդների շրջանում: Պատահական չեն տվյալ ենթատեքստում կաթողիկոս Սահակ Գ Ջորափորեցու (677-704) մահից առաջ փոխարքա Մուհամմադ իբն Մարվանին (693-710) հասցեագրված ավանդական այն խոսքերը, որոնք մեջբերում է Լ. դարի երկրորդ կեսի վարդապետ Անոնդը. «Բայց վասն հաւատոյս մեր՝ զի իշխանութիւն լիցի մեզ պահել, յոր հաւատացաքն եւ խոստովանեցաք, եւ ոք ի ձերոց այտի մի՛ խոշտանգեսցէ զմեզ՝ դառնալ ի հաւատոց մերոց»⁴:

Միևնույն ժամանակ պետք է խոստովանել, որ հայ և վրաց մատենագրքերում անկարելի է գտնել տեղեկություն եղած եկեղեցիների, ինչպես նաև Արմինիայի ոչ-խլամական մյուս համայնքների, որոնք մահմեդական իրավագիտական գրականությունում «ձիմվի» (ذمي – բառացիորեն. «[մահմեդականների] հովանու տակ գտնվող») եղրաբառով էին նշվում, պաշտամունքային շինությունների ավերման վերաբերյալ: Սրա բացատրությունը մենք դարձյալ

¹ ١٨٨٤ \ ١٣٠٢ ، كتاب الخراج. أبو يوسف. Kitab al-kharadj. Bulaq, 1302 AH / 1884 AD, p. 72:

² Ըստ ժԱ. դարի վրաց պատմիչ Սուբխատ Գավիթի-ձեի՝ Երիսթավ (իշխան) Աշոտ Ա Բագրատիոնին (մոտ 810–826) կառուցել է Արտանուշի բերդաբաղաճում սուրբ Պետրոս ու Պողոս առաքյալների եկեղեցին (*Кармлиц Цховреба*, т. 1, с. 377): Թ. դարի վերջի հայ պատմիչ Թովմա Արծրունու *Պատմութիւն տանն Արծրունեաց* երկասիրությունում հիշատակվում է «...բարձրաբերձ եկեղեցին, որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ (Բագրատունին, 826–851. – Ա. Շ.)...» (**Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց**, հրատ., թարգ. և ծանոթագր. Վ. Վարդանյանի, Եր., Երևանի համալս. հրատ., 1985, էջ 190):

³ *Кармлиц Цховреба*, т. 1, с. 243:

⁴ *Պատմաբանութիւն Անոնդեայ Մեծի վարդապետի Հայոց... Մատենագիրք Հայոց*, հտր. 9 (Ը Գար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2007, էջ 753:

դառնում ենք Աբու Յուսուֆի մոտ. «Իսկ ինչ վերաբերում է... ձիմֆների դրության մասին և թե ինչպես մահմեդականների կողմից նվաճման ժամանակ նրանց թողնվել են տաճարները և եկեղեցիները փաղափներում... ու չեն փանդվել: Բան այն է, որ մահմեդականների ու ձիմֆների միջև կնքվել էր հաշտության պայմանագիր շիզյա վճարելու պայմանով, իսկ փաղափները հանձնվեցին այն պայմանով, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները, թե՛ փաղափի ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է փանդվեն...»¹:

Մինչդեռ եկեղեցաշինության դեմ իշխանությունների արգելքի ընդունման պահից Արմինիայի բոլոր խոշոր քաղաքների կենտրոններում, հաճախակի հնազարյա քրիստոնեական տաճարների անմիջապես հարևանությամբ վեր սկսեցին բարձրանալ ճոխ զարդարված մայր մզկիթներ: Դրա մասին ստիպված են լինելու խոստովանել այն բոլոր արաբ ու պարսիկ աշխարհագիրներն ու ճանապարհորդները, որոնք ժ. դարում այցելելու են Արմինիայի տարածքում 886-ից հետո ձևավորված անկախ պետություններ: Ալ-Մուկադդասին (946/7- մոտ 1000) դրանցից մեկն էր, ով համոզվեց նմանատիպ մզկիթների առկայությանը: Նրա հեղինակած «Ասվագույն բաժանումները կլիմաների հանաչման համար» (أحسن التقاسيم في معرفة الأقاليم [Ահսան աթ-թակասիմ ֆի մա'արիֆաթ ալ-ակալիմ]) գրքում մենք հայտնաբերում ենք մայր մզկիթների մասին վկայություններ և՛ Ախլատում (Խլաթ), և՛ Դաբիլում (Դվին), և՛ Բարձա'այում (Պարտավ), և՛ ալ-Բաբում (Դերբենտ), և՛ Կաբալայում (Կապադակ), և՛ Մալազկիրդում (Մանազկերտ), և՛ Շարվանում, և՛ Շաքքիում (Շաքի/Շաքէ)²:

Մենք բացարձակապես համոզված ենք, որ Արմինիայում իսլամական պաշտամունքային շինությունների նմանատիպ շինարարական եռուղեքը, ինչը նահանգի թվարկված քաղաքներում մահմեդական համայնքների ձևավորման բնական հետևանքն էր, պետք է որ սկսված լիներ 750-ին խալիֆայությունում՝ Աբբասյանների հարստության հաստատումից հետո: Ինչպես հայտնի է, նրանց օրոք էր, որ «դարձի եկած» էթնիկ ոչ-արաբ մահմեդականները այսուհետև լիովին իրենց իրավունքներով հավասարվում էին ի ծնե մահմեդական արաբներին և նույնիսկ կարող էին ընդգրկվել համամահմեդական կայսրության կառավարման համակարգում թե՛ կենտրոնում և թե՛ նրա ծայրամասերում: Իսլամացած հայերի նմանատիպ ընդգրկման թերևս ամենավաղ օրինակն են ոմն Յահյա (մկրտված պետք է որ Յովհաննէս լիներ) ալ-Արմանիի երկու որդի-

¹ Abu Yusuf, p. 80: Թերևս միակ բացառությունն է տվյալ դեպքում «Պատմաբանութիւնում Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց...» մեր կողմից նկատած «գկործանումն եկեղեցեաց» արտահայտությունը (տե՛ս՝ Ղևոնդ, էջ 749): Սակայն հետագա ենթատեքստից պարզ է դառնում, որ խոսքը այստեղ գնում է վերոհիշյալ Մուհամմադ իբն Մարվանի կողմից Այրարատի Բագրեւանդ զավառում սուրբ Գրիգոր վանական համալիրի ոչ թե փանդման, այլ քայանման ենթարկելու վերաբերյալ (տե՛ս՝ նույն տեղում, էջ 746-747):

² St' u՝ المكتبة الجغرافية العربية – Biblioteca Geographorum Arabicorum (BGA), ed. M. de Goeje, I-VIII, Lugduni Batavorum, 1870-1894, pars III, p. 375-377:

ները և թողը Ասորական սահմանային գոտուց (արաբ. *التغور الشامية* [աս-Սու-ղուր աշ-Շամիյյա]): Ըստ ալ-Բալաձուրիի և այլ մահմեդական մատենագիրների՝ ալ-Յա 'կուբիի (մահ. 897-ին) ու ատ-Տաբարիի (838-923), որդիներից մեկի անունն էր 'Ալի, ով 862-863 թթ. Արմինիայի և հարակից Աձարբայջան (Ատրպատական) նահանգի կառավարիչն էր, մյուսինը՝ Ահմադ, ով Ասորական սահմանային գոտում տեղակայված ամրությունների (արաբ. *عواصم* ['Աուասիմ], եգ. թ. *عاصمة* ['ասիմա]) կառավարիչն էր: Թոռան անունն էլ Մուհամմադ իբն 'Ալի էր, ով 872-ին արշավեց բյուզանդացիների դեմ¹:

Ընդ որում, իսլամական կրոնը ոչ մի կերպ չէր խանգարում հայկական ծագումով արաբական վարչակազմի ներկայացուցիչներին կատարելու իրենց պաշտոնական պարտականությունները՝ հաշվի առնելով հայոց ազգային շահերը: Ինչպես վկայում է կաթողիկոս Յովհաննէս Ե Գրասխանակերտցին (898-929), «...Ալի արմանին... ըստ հրամանի ամիրապետին՝ (խալիֆի — Ա. Շ.) իշխան իշխանացս Հայոց զնա՝ (Աշոտ Բագրատունուն — Ա. Շ.) կացուցանէր... արքունական պատուով ճոխացուցեալ՝ 'ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»²:

Մինչդեռ այլազավանները, մասնավորապես քրիստոնյաները, հրեաներն ու զրադաշտականները, ի տարբերություն ի ծնե կամ «գարձի եկած» պետական կրոնի հետևորդների, շարունակում էին Աբբասյանների օրօք օժտված մնալ սահմանափակ իրավաբանական և քաղաքացիական իրավունքներով³: Հատկապես՝ նրանք պարտավոր էին մուծել ծանր գլխահարկը: Մահմեդական իրավագիտության դպրոցի հիմնադիրները Ը. դարի երկրորդ կեսին ջիզյայի հարկելու կապակցությամբ իրենց տեսության պարզաբանումներում վկայակոչում էին ս. Ղուրանի 9-րդ սուրայի հետևյալ 29-րդ այան. «Կուլեցե՛ Գրֆի ժողովրդից այն մարդկանց դեմ, որոնք չեն հավատում Ալլահին, վերջին դատաստանի օրվան, արգելված չեն համարում այն, ինչ Ալլահը և Նրա մարգարեն են արգելել և չեն դավանում ճշմարիտ կրոնը, մինչև որ իրենց ձեռքով և հնազանդ վիճակում վնասեն գլխահարկը»⁴:

Չնայած իսլամ ընդունելու դեպքում հարկային անձեռնմխելիությանը,

¹ Al-Beladsori, p. 246; جعفر بن وهب ابن واضح الكاتب العباسي المعروف باليعقوبي تاريخ احمد بن ابي يعقوب بن — Ibn Wadhah qui dicitur al-Ja'qubi, Historiae, ed. M. Houtsma, 1-2, Lugduni Batavorum, 1883, t. 2, p. 606, 624; تاريخ الرسل والملوك لابي جعفر محمد ابن جرير الطبري — Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari, cum aliis ed. M. de Goeje, series I-III, Lugduni Batavorum, 1879-1901, ser. III, p. 1508, 1509:

² Յովհաննու Կաթողիկոսի Գրասխանակերտցու Պատմութիւն Հայոց, բնագրի հետ հմմտ. Ալ. Մարգարյան, քարգ. և ծանոթագր. Գ. Պոստոյանի, Եր., Երևանի համալս. հրատ., 1996, էջ 136, 137:

³ Գրա մաաիմ տե՛ս՝ Илья Петрушевский, Ислам в Иране в VII-XV вв.: Курс лекций, 2-е изд., Санкт-Петербург, изд-во Санкт-Петербургского университета, 2007, с. 171:

⁴ ١٩٠٧ طبع في مطبعة دومبر اوسكى، قازان. كلام شريف. قازان. — Коран, пер. с араб. яз. Г. Саблюкова, 3-е изд., Казань, Центральная Типография, 1907, с. 350 и 351:

նյութական վիճակի բարելավմանը, թվարկված արտոնությունների ու իրավունքների ձեռք բերմանը՝ մենք հիմք չունենք պնդելու թե՛ «Աբբասյանների օրոք Արմինիայի քրիստոնյա բնակչությունը զանգվածաբար ընդունեց մարգարե Մուհամմադի (մոտ 570-632) կրոնական ուսմունքը, ինչպես դա տեղի ունեցավ, ասենք, Ասորիքի ու Եգիպտոսի՝ բյուզանդական նախկին այս պրովինցիաների քրիստոնյա մեծամասնության հետ, կամ էլ Իրանի ու Միջին Ասիայի զրադաշտական մեծամասնության հետ: Փոխարենը մահմեդական համայնքներ ձևավորվեցին Արմինիայի բոլոր խոշոր քաղաքներում: Դրա օգտին է անուղղակիորեն վկայում ո՛չ միայն ալ-Մուկադդասիի քաղաքների վերոհիշյալ ցուցակը ճոխ մայր մզկիթների առկայությամբ, այլև՝ Ժ. դարի երկրորդ կեսին այս տարածաշրջանը այցելած ևս մեկ արաբ ճանապարհորդի՝ Իբն Հաուկալի գրանշումը. «Արմինիայում... կան մահմեդականներին պատկանող ֆալաֆներ, որոնք առ այսօր մնում են նրանց ձեռքում: Եթե հին ժամանակներում դրանք հայերի իշխանության տակ են եղել գլխահարկ վճարելու պայմանով, ապա՝ այժմ մահմեդական իշխողների ձեռքում են, ինչպես, (օրինակ – Ա. Շ.), Արշիլը, Մալազկիրդը կամ էլ Խիլատը»¹:

Մահմեդական համայնքները Արմինիայում պետք է որ բաղկացած լինեին ո՛չ միայն արաբ վերաբնակիչներից, այլև Հայկական լեռնաշխարհի ու Հարավային Կովկասի երկրներում Մասանյանների (227-651) դերիշխանության օրօք հաստատված զրադաշտական պարսիկների ժառանգներից: Այդ կարծիքին ենք մենք հանդուժ, հիմնվելով Ժ. դարի մահմեդական աշխարհագիրների ու ճանապարհորդների վկայությունների վրա առ այն, որ Արմինիայում տեղական (ազգային) լեզուներից ու պետական արաբերենից բացի լայն տարածում ունեն նոր պարսկերենը՝ Ֆարսին, որի կրողներն էին հանդիսանում մահմեդականացված պարսիկները: Ինչպես մոտ 930-ին ալ-Խատաբին էր գրում, հիմնվելով մեկ այլ հեղինակավոր իրանցու՝ ալ-Բալխիի (մոտ 850-934) ուղեւորության վրա՝ «Աձարբայջանի, Արմինիայի ու Առանի լեզուն (նոր. – Ա. Շ.) պարսկերենն է և արաբերենը, բացառությամբ Դաբիլի ու նրա շրջակայքի բնակչությունից, որը խոսում է հայերեն, իսկ Բարձա՛այի շրջակայքում լեզուն առաներենն է»²: Իբն Հաուկալը հիշրայի 367 (977/8)-ին իր նախորդի հաղորդագրությանը ավելացնում է Արմինիայում կատարած իր սեփական դիտողությունները. «Աձարբայջանի և Արմինիայի բնակչության ճնշող մեծամասնության լեզուն (նոր – Ա. Շ.) պարսկերենն է, որը ընդհանուր լեզու է (այստեղ – Ա. Շ.), սակայն արաբերենը ևս կիրառվում է նրանց միջև»³: Վերջապես, ալ-Մուկադդասին 985-ին գրելու է. «Արմինիայում խոսում են

¹ BGA, pars II, p. 245:

² *Op. cit.*, pars I, p. 192:

³ *Op. cit.*, pars II, p. 250:

հայերեն, Առանում՝ առաներեն, իսկ նրանց խոսակցական պարսկերենը հասկանալի է ու հիշեցնում է հոտրասանի բարբառն իր հնչյուններով»¹:

Արմինիայում մահմեդական համայնքների համարման ևս մեկ աղբյուր էր հանդիսանում Արմինիյա Բ-ի բնիկ աղուանից բնակչությունը Ջախակողմյան Կուրի շրջաններում, հատկապես՝ Շիրվանում, Բաբ ալ-Աբվաբում և մասնակիորեն Շաքիում: Աղուանները ավելի ընկալունակ դուրս եկան նոր միաստվածյան կրոնին, քան Արմինիայի հայ կամ վրաց բնակչությունը: Դրան անկասկած նպաստեց մերձկասպյան շրջաններում մեր կողմից պարզած համեմատաբար ավելի մեծ թվով արաբական տարրի վերաբնակեցումը² և 799-ին Շիրվանշահերի, իսկ 869-ին Բաբ ալ-Աբվաբի մահմեդական ինքնավար ամիրայությունների ձևավորումը:

Ահա թե ինչու է ալ-Մուկադդասի կողմից թվարկվող մայր մզկիթներ ունեցող Արմինիայի 8 քաղաքներից 4-ը տեղադրվում Ջախակողմյան Առանում: Հավանական է, նահանգի այս տարածաշրջանը նկատի ունենա, գրելիս՝ «Այս երկրամասում բարեհաճություն է զգացվում դեպի իսլամական կրոնը...»³: Շաքիի շրջանի բնիկ բնակչության մասնակի մահմեդականության օգտին են վկայում մեկ այլ արաբ ճանապարհորդ՝ ալ-Մաս՝ուդիի (մահ. 956-ին) հիշրայի 332 (943/4)-ին գրի առած խոսքերը. «Շաքիի բնակիչները քրիստոնեական դավանանքի ժողովուրդ են, որոնց մեջ սակայն զգալի թվով մանմեդականներ կան...»⁴: Եվ չնայած որ ալ-Մուկադդասին շուրջ չորս տասնամյակ անց կհավաստիացնի իր ընթերցողին առ այն, որ «Քրիստոնյաները այնտեղ՝ (Շաքիում – Ա. Շ.) մեծամասնություն են կազմում»⁵, «Պարսկական աշխարհագրության» (حدود العالم [Հուդուդ ալ-Սլամ]) անանուն հեղինակը 982-ին պնդում էր, թե Շաքիի (Շաքիի) բնակչության շրջանում առկա են միայն մահմեդականներն ու հեթանոսները⁶:

Մեր բոլոր որոնումները ապարդյուն անցան գտնելու մահմեդական գրա-

¹ *Op. Cit.*, pars III, p. 378:

² Տե՛ս մանրամասնորեն՝ **Արսեն Շահինյան**, «Արաբական խալիֆայության ազգային (միգրացիոն) և կրոնական փաղափակությունը Հայաստանում և Արմինիայում», *Էջմիածին*, 2007, ժ, էջ 24-38; **Арсен Шагинян**, «Формирование новой этнической и конфессиональной карты Армянского и Южно-Кавказского нагорий при арабах», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2012, вып. 2, с. 57-64:

³ BGA, pars III, p. 373:

⁴ **Al-Mas'udi**, *Les Prairies d'or*, texte et trad. par **C. Barbier de Meynard et Pavet de Courteille**, t. 1-9, Paris, *Collection d'ouvrages orientaux*, publiée par la Société Asiatique, 1861-1877, t. 2, p. 68:

⁵ BGA, pars III, p. 376:

⁶ حدود العالم – Худуд ал-Алам (Рукопись Туманского), изд. В. Бартольда, Ленинград, изд-во Академии наук СССР, 1930, с. 65 (Л. 35а): Շաքիի բնակչության շրջանում հեթանոսների առկայության օգտին է խոսում նաև Զուանշեր Զուանշերիանին (*Картлис Цховреба*, т. 1, с. 243):

կանությունում Տփղիսի կենտրոնում, ինչպես ասենք, Դվինի կամ Պարտավի դեպքում էր, մայր մզկիթի շինարարության վերաբերյալ որևէ տեղեկություն: Միևնույն ժամանակ արևելագիտությանը վաղուց է հայտնի այն փաստը, որ վրաց պատմական քաղաքամայր կենտրոնով արաբական իշխանության օրոք ձևավորվել էր համանուն Թիֆլիսի ամիրայությունը: Ակնհայտ է, որ առանց համապատասխան մահմեդական համայնքի ձևավորման չէր կարող իրականություն դառնալ այդպիսի մահմեդական ժառանգական կառավարումը: Ավելին՝ ալ-Մաս'ուդին գրում է. «Թիֆլիսում մի մարդ կար Իսհակ իբն Իսմա'իլ (իբն Շու'այբ, 818-853 – Ա. Շ.) անունով: Մահմեդականների շրջանում իր նախկին կողմնակիցների օժանդակությամբ սա կարողացավ հնազանդեցնել շրջակայքում հաստատված (արաբական – Ա. Շ.) ցեղերը...»¹:

Արմինիայում մահմեդական համայնքները համալրվում էին նաև արաբական վերաբնակեցված ցեղային ավազանու բնիկ հայ ազնվականության հետ խառնվելու հաշվին՝ հայուհիներին կնության առնելու միջոցով, այն ինչ իսլամի հետևորդներին ս. Ղուրանը հաստատ չէր արգելում²:

Արմինիայի երեք անգամ կառավարած Յազիդ աս-Սուլամիի (752-754, 759-764 և 775-780) հայրը, իրաքցի պատմիչ Խալիֆա իբն Խալլատի (776/7-854) տվյալներով, ամուսնացած էր աս-Սիսաջան (Սյունեաց) տնից հիշրայի 84 (703/4)-ին գերեարված իշխանագասեր հետ³: Ինչպես հետևում է Ժ. Գ. դարի վարդապետ Վարդան Բարձրբերդցու «Պատմութիւն տիեզերական» երկասիրությունից՝ Ջահհաֆ աս-Սուլամին կնության էր առել 774-775 թթ. Հակա-արաբական ապստամբության առաջնորդ՝ Մուշեղ Մամիկոնյանի դստերը⁴, իսկ նրա թոռ Սավազը, ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու՝ Բագրատունեաց տան Արուսեակ անունով իշխանագասերը⁵: Հայուհիներին կնության առնել գերադասում էր ոչ միայն աս-Սուլամի ցեղային ավազանին: Բագրատունեաց տան ևս մեկ իշխանագուստը, ըստ Թովմա Արժրունու և աս-Տաբարիի, կնության զնաց Արզան արաբական ամիրայության հիմնադիր Մուսա իբն Զուրարային (? - մոտ 852)⁶: Իսկ Արժրունեաց տան իշխանագուստը, ինչպես

¹ Al-Mas'udi, t. 2, p. 65:

² Սուրբ Ղուրանի 2-րդ սուրահի 220-րդ այսքը արգելում էր միայն մահմեդականներին կնության առնել հեթանոսների (Koran, c. 62–64 և 63–65):

³ تاريخ خليفة بن خياط \ حقه وقتم له اكرم ضياء العمرى. الأتجب، ١٣٨٦ - ١٣٨٧ / ٥١ ٩٦٧ م - The History of Khalifah ibn Khayyat / Ed. by Akram Diya' al-Umari. Nagav, 1386–1387 A. H. / 1967 A. D. p. 291; հմմտ. նաև՝ al-Beladorsi, p. 205:

⁴ Մեծին Վարդանայ Բարձրբերդցու Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծ. Մ. Էմին, Մոսկվա, տպ. Լազարեան նեմարանի արևելյան լեզուաց, 1861, էջ 105:

⁵ Գրասխանակերտցի, էջ 116 և 117:

⁶ Թովմա Արժրունի, էջ 176 և 177; at-Tabari, ser. III, p. 1408:

հետևում է Յովհաննէս Դրասխանակերտցու գրանշումից, կնուխյան գնաց նրա ժառանգ որդուն՝ Աբու ալ-Մու'իզզին (852- ?)¹:

Նման խառը ամուսնություններից ծնված զավակները կրում էին բացառապես մահմեդական անուններ, քանզի դաստիարակվում էին իսլամական մշակույթում, ինչը պահանջվում էր ս. Ղուրանով: Դրա վառ օրինակն է Արմինիայի վերոհիշյալ կառավարիչ Յազիզ առ-Սուլամին, ում մայրը Սյունեաց իշխանական տնից էր: Ընդհանրապես, ինչ վերաբերում է այդ հայուհի մայրերին, ապա նրանք, հավանական է, չէին շտապում կրոնափոխվել: Համենայն դեպս, բոլոր մահմեդական ու հայ մատենագիրները, որոնց մոտ հայտնաբերում ենք խառը ամուսնությունների մասին բազմաթիվ այդպիսի տեղեկություններ, ոչինչ չեն գրում կնուխյան գնացած հայ կանանց զավանափոխության վերաբերյալ: Ավելին՝ մեր տրամադրության տակ ունենք Յովհաննէս Դրասխանակերտցու մեկ վկայություն առ այն, որ Ալլամխրան, նույն ինքն է Աբու ալ-Մու'իզզը, Արծրունեաց տան իշխանագաստեր հետ ամուսնանալուց հետո «...ի ծածուկ ունէր զհաւատս քրիստոնէութեան...»²:

Վերջապես՝ Արմինիայի մահմեդական համայնքները պետք է որ համարվեին քրիստոնյա ավագանու բռնի հավատափոխության հաշվին: Մեր տրամադրության տակ ունենք վարքագրական մի շարք վկայաբանություններ, որտեղ մանրամասնորեն նկարագրված են գերված իշխանների մարտիրոսությունները հանուն Քրիստոսի: Չնայած որ բովանդակությունը հայ է վրաց այս ժանրի գրականությունում միշտ չէ որ լիովին համապատասխանում է պատմական իրողությանը, սակայն նահատակության փաստերը շատ դեպքերում հաստատվում են պատմագրական սկզբնաղբյուրներում տեղ գտած գրանշումներով:

Արմինիայում առաջին մարտիրոսներից էին երկու ազնվական եղբայրներ Մանկիկն ու Միրզազատը Պարտավից, որոնց հայոց 160 (711/2)-ին սարսափելի տանջանքների ենթարկեց նահանգի կառավարիչ՝ Աբդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն ան-Նու'ման (ալ-Բահիլին, 706—717): Այս ողբերգական պատմությունը, որը ավարտվում է առաջին եղբոր մահապատժով (Միրզազատը իր կյանքը փրկեց՝ ընդունելով իսլամ), մասնակի անդրադառնում է ժ. գարի պատմիչ Մովսէս Դասխուրանցին «Պատմութիւն Աղուանից աշխարհի» Գ գրքի ժէ գլխում³: Առաջին նահատակներից էր թերևս Սյունեաց Գողթն զավառի տեր Խոսրովի որդին՝ Վահանը, ով գերի էր տարվել (աշ-)Շամ, այսինքն՝ Ասորիք,

¹ Դրասխանակերտցի, էջ 176 և 177:

² Նույն տեղում, էջ 176:

³ Մովսէսի Կաղանկատուացուց Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, հատ. ԺԵ (Ժ. դար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2012, էջ 394-396:

հայոց 186 (737/8)-ին¹: Իսկ այս ողբերգական պատմությունը անդրադարձ եղավ 744-ին Արտավազդ Երաշխավորցու «Պատմութիւն և վկայաբանութիւն Վահանայ Գողթնացոյ» վարքագրական ժանրի երկում²: Վրաց առաջին նահատակներից էր արգեն հիշատակված Լ. դարի երկրորդ կեսի իշխան Արշիլը: Սակայն այս ողբերգական պատմությունը անդրադառնում է միայն «վրաց պարմահայր» Լեոնտի Մրովելին ժԱ. դարի վերջում իր փոքրիկ վարքագրական ստեղծագործությունում «Սուրբ Արշիլի մարտիրոսությունը» խորագրով³: Միևնույն ժամանակ զրա մասին շարադրում է Ղևոնդ երեցը, միայն թե առանց հիշատակելու նահատակի անունը: Փոխարենը նա թվագրում է մահապատիժը Մուսէ խալիֆի, նույն ինքն է Մուսա իբն ալ-Հադի (785-786), կարճաժամկետ կառավարման վերջում⁴: Բացի այդ՝ Ղևոնդի վկայություններ, Խազմը, նույն ինքը Խուզայմա իբն խազիմ աթ-Թամիմին՝ 785-786 թթ. Արմինիայի փոխկառավարիչը, հետապնդում էր Համազասպ, Սահակ և Մեհրուժան Արծրունիներին: Ավարտվեց նրա անօրենությունը հայոց 233-ի Աստվածահայտնության օրը (=785-ի հունվարի 6-ին) առաջին երկու նախարարների մահապատժով: Մեհրուժան էլ փրկեց իր կյանքը՝ ընդունելով իսլամ⁵:

Եվ այս ամենը ղեռ վերջը չէ: Թովմա Արծրունու վկայությամբ՝ հայոց 302-ի ձմռանը (853-854 թթ. ձմռանը) Բուղա (ալ-Քարբիր աշ-Շարաբի, 852-855) կառավարիչը, ով ըմբոստացած Արմինիայում զբաղված էր, շարիաթի (արաբ. شريعة – բառացիորեն՝ «ճշմարիտ» կամ «ճիշտ ուղի») համաձայն, պատժիչ արշավանքներով, Դվինում մահվան դատապարտեց 150 խոռվարար նախարարների: Պատճառը մեկն էր՝ նրանք բոլորը ձերբակալվելուց հետո հրաժարվեցին իսլամ ընդունել⁶:

Մինչդեռ, նույնիսկ խոռվարարները կարող էին արժանանալ փրկություն՝ անշուշտ միայն իսլամ ընդունելու պայմանով: Այս տեսության օգտին են խոսում Թ.ժ. զգ. բոլոր հայ պատմիչները: Բավական է հիշել Բուղայի կողմից 855-ին Խալիֆայության մայրաքաղաք Սամառա ապստամբությունը ճնշելուց հետո զեքի տարված Արմինիյա Ա-ի և Բ-ի վերնախավի մեծաթիվ ներկայացու-

¹ Թովմա Արծրունի, էջ 390 և 391; Դրասխանակերտցի, էջ 102 և 103:

² Պատմութիւն և վկայաբանութիւն Վահանայ Գողթնացիոյ, Մատենագիրք Հայոց, հտր. 9 (Ը դար), Անթիլիաս-Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2007, էջ 869-945:

³ Карлис Цховреба, т. 1, с. 245–248:

⁴ Ղևոնդ, էջ 848:

⁵ Նույն տեղում, էջ 846-848:

⁶ Մանրամասնորեն տե՛ս՝ Թովմա Արծրունի, էջ 260-268 և 261-269, հմմտ. Դրասխանակերտցի, էջ 124-128 և 125-129: Այս նահատակների մեծ մասը վաղուց է Հայ Առաքելական եկեղեցու կողմից դասված սրբերի շարքը: Գեո ժԲ. դարի հայոց ֆահանա Սամվել Անեցին էր գրում, որ այդ նահատակների հշատակը եկեղեցին նշում է յուրաքանչյուր տարի մեհեկան ամսվա 25-ին (Մամուէլի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Ա. Տէր-Միքելեան, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1893, էջ 93:

ցիչներին: Հայ և մահմեդական մատենագիրների վկայությունների հիման վրա մեր կողմից վերականգնված ցուցակում ընդգրկված է 12 ազնվական անուն¹:

Յովհաննէս Դրասխանակերտցու տվյալներով խալիֆը մայրաքաղաքում բոլորին առաջարկեց փրկագին՝ ընդունել իսլամ: Մի մասը համաձայնվեց և միայն հրաժարվողները դատապարտվեցին մահվան: Վերջիններիս թվում էր գահերէջ իշխան և սպարապետ Սմբատ Բ Բագրատունին (851–855)²: Ավելին՝ փրկվածները հնարավորություն ստացան վերագառնալ հայրենիք, և եթե ժԱ. դարի սկզբի պատմիչ Ասողիկին հավատանք, ապա երկու իշխաններից բացի, այդ թվում Սմբատ Բագրատունուց, մնացած բոլորը վերագարձան հայրենիք³: Հետևաբար, սրանք բոլորն էլ Սամաույում մահմեդականացան: Սակայն սրանց հետագա քաղաքական գործունեությունը հայրենիք վերագառնալուց հետո, ինչպես դա հետևում է Թ. դարի վերջի – ժԱ. դարի սկզբի հայոց մատենագրքերից, Հայկական լեոնաշխարհում և Հարավային Կովկասում արաբական գերիշխանության ավարտի սկիզբը դարձավ⁴:

Եվ այսպես, իսլամը Արմինիայում գերիշխող դիրք զբաղեցրեց այն շրջաններում, որտեղ հզոր էր վերաբնակեցված արաբական տարրը, որը Թ. դարում հիմնեց ժառանգական ամիրայություններ, իսկ նահանգի մահմեդական ընդհանրությունը հիմնականում բազկացած էր կամ Արաբիա թերակղզուց այստեղ ներգաղթածներից, կամ էլ իսլամն ընդունած տեղի պարսիկներից: Արմինիայի հիմնական բնիկ բնակչությունը, բացառությամբ մերձկասպյան շրջանների, շարունակում էր դավանել քրիստոնեություն: Եվ դա ստիպված էին խոստովանել ժ. դարի մահմեդական ճանապարհորդները: Օրինակ, ալ-Իստախրու մոտ հետևյալն է գրված. «Արմինիայն... գտնվում է քրիստոնյա մեծամեծների ձեռքում, և սրանք են, որ գերակշռում են Արմինիայի բնակչության շրջանում»⁵: Գրեթե նույն խոսքերն ենք գտնում Իբն Հաուկալի մոտ. «Արմինիայում տիրապետող (կրոնը. – Ա. Շ.) քրիստոնեությունն է...»⁶:

¹ Դրա մասին մանրամասնորեն տե՛ս՝ **Арсен Шагинян**, «Последнее восстание в арабской провинции Арминийа (850-855 гг.)», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2008, вып. 4, с. 108-117: Գերևարված քրիստոնյա իշխանների հետագա բազմազան գործունեությունը հայրենիք վերագառնալուց հետո խոսում է Սամաույում վկայության ամբողջ ձևականության օգտին: Մենք նկատի ունենք իսլամի հինգ հենասյուններից առաջինը և ամենագլխավորը առ այն, որ «*Զիս՝ Ասոված Ալլահից բացի, և որ Մուհամմադը նրա առաջյալն է*»:

² **Դրասխանակերտցի**, էջ 130-132 և 131-133:

³ *Ստեփանոսի Տարսնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, աշխ. Ս. Մալխասեանցի, ՍՊԲ., տպ. Ի. Ն. Սկորոխոդովի, 1885, էջ 110:*

⁴ Դրա մասին մանրամասնորեն տե՛ս **Арсен Шагинян**, «Расформирование арабской провинции Арминийа во второй половине IX века», *Вестник Санкт-Петербургского университета*, сер. 2, История, 2009, вып. 2, с. 213-223:

⁵ *BGA*, pars I, p. 188:

⁶ *BGA*, pars II, p. 245:

Arsen K. Shahinyan
Islam in the Arab Armīniyā¹

At the beginning of the 8th century the lands of Greater Armenia as well as the lands of Caucasian Iberia (K‘art‘li) and Albania (Ałuank‘) conquered by the Muslims were included into the administrative unit (Arab. vilayet) of the Arab Caliphate named Arminiya. In academic literature, it is accepted to write that at the early stage of the conquests the Arabs-Muslims were tolerant of other creeds. They really were, although in the 8th century it is impossible to find in Armenian or Georgian sources information about construction of new churches on the territory of Arminiya while the whole preceding period in Christian history of Armenia, Iberia and Albania (4th-7th centuries) was marked with a boom of building such religious facilities. Moreover, in the very centre of the largest cities of Arminiya, often in close proximity to an ancient church, cathedral mosques began to tower. This fact was acknowledged by Arab and Persian geographers and travelers of the 10th century who would visit this northern region.

The construction boom of building mosques in Arminiya was to begin after the ‘Abbasid dynasty came to power in the caliphate in 750. As is generally known, under the ‘Abbasids the process of Islamization of all the non-Muslim population of the caliphate moved faster, since henceforth neophyte Muslims were given the same rights at the Arabs-Muslims. They were not only exempted from paying a burdensome poll tax (Arab. jizyah), but also could be engaged into the management of the Pan-Islamic caliphate. In spite of essential privileges, it is impossible to speak of mass peaceful conversion of the population of Arminiya into the Islam, as was the case of the Christian population of neighboring Syria or the Zoroastrian population of neighboring Iran.

On the contrary, among Armenian and Georgian sources of the 8th-11th centuries, several martyrologies are known, in which a number of Christian princes of the vilayet of Arminiya were excruciated by Arab authorities for their refusal to adopt Islam. In fact the authors of such hagiographical writings set themselves the task of persuading their audience in the exceptional superiority of Christianity over Islam, so the contents of these works were not always in keeping with historical reality. But it does not mean that we have to deny completely the facts of

¹ The authors acknowledge Saint-Petersburg State University for a research grant 5.38.283.2014

forcible islamization of Armenian nobility described in such writings. Moreover, in historical Armenian literature at the turn of the 10th century, there are important evidences that in winter of 853-854, the Arab administration of Arminiya put 150 Armenian princes to death of martyrs for their refusal to adopt Islam, and the Armenian Church made a memorable date in connection with this national tragedy. In 855, dozens of mutinous princes from this Christian vilayet were exiled to the capital of the caliphate. Only a few people who agreed to renounce Christianity openly in favor of the new religion survived.

There also occurred cases of Islamization of the population through marriages between Arab and Armenian nobility. Most of such noblemen engaged in mixed marriages, were taking on Arabic names, often added to them epithet “al-Armani”.